ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/18» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

23-ը հունվարի 2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,

գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայության մթերքի պլանավորման և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան,

ՀՀ ՋՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և Պ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ասատրյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՄ ապահովման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Ս. Պետրոսյան,

Քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության ՆՏՄ գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Վարդանյան:

Ի գիտություն. հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի ղեկավարի անունից Լիազորված մարմին ուղարկված ԴՎԱ/5314 առ 27.12.2018թ. գրության/պարզաբանման հարցման մեջ ներառված էին սույն ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատման ընթացքում ի հայտ եկած բարդություններին վերաբերվող հարցեր, սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել որակավորման փաաստաթղթերի գնահատման նիստը՝ մինչև պարզբանման պատասխանի ստանալը: 23.01.2019թ. գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/18» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Վարդանյան)

1. Մասնակցի՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Գ. Վարդանյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/18» ծածկագրով ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԷՆՋԼ ՍՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող բոլոր պահանջված փաստաթղթերն առկա են, սակայն դրանցում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես տեխնիկական չափորոշչի գնահատման արդյունքում արձանագրվել են շտկման ենթակա թերություններ, մասնավորապես բացակայում էին տեխնիկական առաջարկի՝ սույն Ընթացակարգի հրավերի համապատասխան չափաբաժնի մասով նախատեսված տեխնիկական բնութագրում առկա ծանոթության 10-րդ տողը: Անհրաժեշտ է ներկայացնել նաև սույն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի շտկված տարբերակը, քանի որ նախկինում բացակայում էր «Համատեղ գործունեության պայմանագիր»-ի Գործընկեր 2-ի տվյալները, վերջինիս կողմից Հավելված 1-ով նախատեսված և պարտադիր բոլոր հավաստումները և հայտարարությունները, Ընկերության տվյալները, իրական շահառուների տվյալների մասին հայտարարությունը: Մասնագիտական փորձառությունը հավաստող՝ ներկայացված նմանատիպ պայմանագիրը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերի պահանջներին, չի ներկայացվել Գնորդի կողմից ձեռք բերված ապրանքի ընդունման ակտ, վաճառված ապրանքերի վաճառքը հավաստող հաշիվ ապրանքագիրը Գնորդի/Ընդունողի կողմից հաստատված չէ: 25.01.2019թ. նիստի ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառ. 04.05.2017թ. համար 526-Ն որոշմամբ հաստատված գնման գործընթացների կազմակերպման կարգի 47-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և առաջարկել մասնակցին ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան շտկումներ և Համակարգի /eauction.armeps.am/ միջոցով ներկայացնել շտկված փաստաթղթերը, այլապես հայտը կմերժվի, իսկ ընկերության տվյալները կներկայացվեն Լիազորվածմարմնին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար: Սահմանված ժամկետում վերոնշյալ անհամապատասխանությունները շտկվել են, մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատվել են բավարար:

06.12.2018թ. ստացված ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված "Էլեկտրոնային աճուրդի իրականացման" կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների վերաբերյալ համապատասխան եզրակացության համաձայն՝ մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ ֆինանսական միջոցներ չափորոշիչի մասով բավարար են հրավերի պահանջներին:

1.2 30.01.2019թ. նիստի ժամանակ, հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները /համակարգում գնահատման մասով կատարվել են համապատասխան գործողություններ/՝ հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/18» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակցին:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/18» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է՝ որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Վարդանյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/18» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Վ. Ասատրյան

Գնահատող Ս. Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար Գ. Վարդանյան